ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-00

«09» 08 2015թ. N 114

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի առաջին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր՝ 3 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2015 թվականի N 14

ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 13-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N1910-Ն որոշմամբ սահմանված N1 հավելվածի 9-րդ կետը՝ *որոշում եմ.*

1. Այգեկի գյուղապետարանում իրականացնել թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարում և գերեզմանի վկայականի տրամադրում:
2. Համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյանին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի հուլիսի 1
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
հեռ. 0231-6-57-60

ՈՐՈՇՈՒՄ

«07» հուլիսի 2015 թվականի N 15-Ա

ՆՎԵՐՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, 41-րդ հոդվածի երրորդ մասով՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի միջոցներով 2015-2016 ուսումնական տարում առաջին դասարան հաճախող երեխաների համար գնել նվերներ՝ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
2. Գնումները համակարգողին (Ս. Թորոսյան)՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի հուլիսի 7
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxayqek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«28» հուլիսի 2014 թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Համայքնային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի առաջին մասով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 162-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գայանե Սարգսյանի 2015 թվականի հուլիսի 27-ի դիմումը՝ *կարգադրում եմ.*

1. 2015 թվականի օգոստոսի 3-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1) Գայանե Սարգսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ՝ ընդամենը 24 աշխատանքային օր (20 աշխատանքային օր նվազագույն արձակուրդ ավելացրած 4 լրացուցիչ աշխատանքային օր):
2. Համարել աշխատանքի մեջ 2015 թվականի սեպտեմբերի 4-ից:
3. Աշխատակազմի քարտուղարի լիազորությունների կատարումը վերապահել աշխատակազմի առաջատար մասնագետ Սուսաննա Թորոսյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի հուլիսի 28

գ. Այգեկ